



**ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ  
ՈՐՈՇՈՒՄ**



Հայաստան, 0025, Երևան, Կորյունի փ. 2 , հեռ. 060621238, 2-38, ss@ysmu.am

**«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»  
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 7-Ի ԹԻՎ 6  
ՀԵՌԱԿԱ ԵՂԱՆԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՆԻՍՏՈՒՄ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2020 թվականի մարտի 16-ի «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» թիվ 298-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության Պարետի 03.05.2020 թվականի թիվ 63 որոշումը, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 1407-Ն որոշմամբ հաստատված «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) կանոնադրության 55-րդ կետը

**ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Հաստատել «2019-2020 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման կանոնակարգը» (20-05-06-01):
2. Հաստատել «2019-2020 ուսումնական տարվա ուսանողների առցանց ատեստավորման կանոնակարգը» (20-05-06-02):
3. Ուժը կորցրած ճանաչել ԵՊԲՀ Գիտական խորհրդի 02.12.2015 թվականի թիվ 03 որոշմամբ հաստատված «Ամփոփիչ ատեստավորման կանոնակարգը» (20-05-06-03):
4. Հանձնարարել ԵՊԲՀ ֆակուլտետների ղեկաններին, ուսանողական խորհրդի նախագահին՝ ծանուցել ուսանողներին այն մասին, որ սույն որոշմամբ հաստատված «2019-2020 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման կանոնակարգով»



նախատեսվող առցանց կապը ապահովող տեխնիկական միջոցների հետ ուսանողի խնդիրներ ունենալու դեպքում կարող են քննությանից առնվազն 5 օր առաջ գրավոր դիմել համապատասխան ֆակուլտետի դեկանին և Համալսարանը կկազմակերպի առցանց քննության անցկացումը Համալսարանի մեկուսացված և առողջապահական անվտանգային կանոնները ապահովող տարածքում կամ սենյակում կամ բացօթյա (20-05-06-04):

5. Հանձնարարել միջազգային գործունեության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ե.Ս.Սահակյանին ներկայացնելու առաջարկություններ՝ Հայաստանից դուրս գտնվող օտարերկրացի ուսանողների ամփոփիչ ատեստավորման քննությունների անցկացման կազմակերպական առանձնահատկությունների մասին (20-05-06-05):

6. Սույն նիստով ընդունված որոշումների կատարման հսկողությունը հանձնարարել ԵՊԲՀ ռեկտոր, պրոֆեսոր Ա.Ա.Մուրադյանին:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ



Ա.Ա.ՄՈՒՐԱԴՅԱՆ

Տ.Գ.ԱՎԵՐԵՅԱՆ